

---

# ԱՂԵՏՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԼԱՆԴՇԱՖՏՆԵՐԻ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՆՈՐ ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ԴԱՍ

## ՍԱՐԱՖՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՀՀ Ներքին գործերի նախարարության կրթահամալիրի  
Փրկարար ծառայության և ճգնաժամային կառավարման  
ուսումնական ստորաբաժանման բնագիտական  
առարկաների ամբիոնի դասախոս  
DOI: 10.61746/18292984-2026.1.28CMT-11

---

**Ամփոփագիր.** Բնական լանդշաֆտների բազմազանությունը պայմանավորված է մի շարք բնական և մարդածին գործոնների ազդեցությամբ և փոխազդեցությամբ: Այդ ազդեցությունները կարող են լինել նաև բնածին և տեխնածին աղետների հետևանքով: Կարելի է առանձնացնել լանդշաֆտների նոր դաս՝ աղետի գոտու լանդշաֆտ: Ելնելով բնածին և տեխնածին աղետների տեսակներից՝ առաջարկվում է դասի բազմազանությունը բաժանել երկու ենթադասի՝ բնածին աղետի գոտու լանդշաֆտ և տեխնածին աղետի գոտու լանդշաֆտ:

**Առանցքային բառեր.** Աղետի գոտու լանդշաֆտ, լանդշաֆտի դաս, բնածին աղետ, տեխնածին աղետ:

Լանդշաֆտը բնական և մարդածին բաղադրիչների համակցված համակարգ է: Հաշվի առնելով հասարակության կայուն զարգացման վրա լանդշաֆտների պահպանության որոշիչ նշանակությունը՝ կարևորվում է լանդշաֆտների հատկությունների, դրանք ձևափոխող ուժերի ու բացասական ազդեցություն ունեցող աղետալի գործոնների վերլուծությունը: Միաժամանակ, առաջնահերթ խնդիր է դառնում լանդշաֆտների կառավարումն ու պլանավորումը՝ դրանց պահպանությունն ապահովելու նպատակով: Համաձայն լանդշաֆտների եվրոպական կոնվենցիայի՝ ընդունվում է, որ եվրոպական լանդշաֆտի որակն ու բազմազանությունը համընդհանուր ռեսուրսներ են, և անհրաժեշտ է համագործակցել լանդշաֆտի պահպանության, կառավարման և պլանավորման խնդիրներում<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիա, 2004 թ.

Բնական և տեխնածին բնույթի տարբեր ազդեցությունների հետևանքով լանդշաֆտները փոփոխությունների են ենթարկվում:

Բնության մեջ բոլոր գործընթացներն ու երևույթները միմյանց հետ փոխկապակցված և միմյանցով փոխապայմանավորված են<sup>2</sup>:

Լանդշաֆտների վրա ազդող հիմնական գործոններից են բուսական ծածկույթը, կենդանի օրգանիզմները, ջուրը, մթնոլորտի բոլոր բաղադրիչները, ապարների ծակոտկենությունը, ապարներում առկա միներալների քիմիական կազմությունը, արեգակնային ճառագայթման էներգիան և հողմահարման համար կարևոր այլ ազդակներ:

Մարդու գործունեության արդյունքում առաջացած լանդշաֆտային փոփոխությունները կապված են նրա գործունեության տարբեր ոլորտների հետ՝ քաղաքաշինություն, ճանապարհաշինություն, ջրամբարների, պոչամբարների, էներգետիկ և արդյունաբերական օբյեկտների, գյուղատնտեսական կենդանիների արոտավայրերի զանգվածային շահագործում, այգեգործություն, հանքարդյունաբերություն, անտառտնտեսություն, աղբավայրեր, ռազմական նշանակության օբյեկտներ, երկաթգիծ, գազատարներ, գերեզմանոցներ և այլն:

Լանդշաֆտների վրա ազդող բնածին հիմնական գործոններից զատ առկա են նաև գործոններ, որոնք պայմանավորված են տեխնոլոգիական գործընթացների զարգացմամբ՝ հանքարդյունաբերություն, էներգետիկա, քաղաքաշինություն, տրանսպորտ, քիմիական արդյունաբերություն և այլն, որոնց ազդեցությունը տարեցտարի ավելանում է:

Առանձնակի կարևորություն ունեն բնության հատուկ պահպանվող տարածքները և անտառները, որոնք դրական ազդեցություն ունեն աշխարհագրական բոլոր ոլորտների վրա:

Լանդշաֆտների պահպանության լավագույն օրինակներից է գեոպարկերի ստեղծումը, որոնց հիմնական նպատակն է ապահովել բնության երկրաբանական հուշարձանների պահպանությունը և հանրայնացումը<sup>3</sup>:

---

<sup>2</sup> Бойнагрян В.Р.,Склоны и склоновые процессы Армянского нагорья, Ереван, изд. ЕрГУ, 2007, с. 27

<sup>3</sup> Սարաֆյան Կ.Մ., Լանդշաֆտային բազմազանության դասակարգումը և աղետի գոտին՝ որպես լանդշաֆտի յուրահատուկ ձև, Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ, 2025 թ., N 1 (26), էջ 118

Լանդշաֆտն այլ բնույթի փոփոխությունների է ենթարկվում նաև բազմատեսակ տեխնածին բնույթի աղետների հետևանքով՝ քիմիական արտանետումներ, ճառագայթային ազդեցություն, մեխանիկական արտանետումներ, ձայնային, ցնցումային, ջերմային ազդեցություններ, բուսական, կենդանական համաճարակներ, անտառահատումներ:

Լանդշաֆտի լուրջ փոփոխություններ են առաջանում նաև մարդու գործունեության այլ դրսևորումների դեպքում՝ հանքարդյունաբերություն, հնագիտական պեղումներ, քաղաքաշինություն, ջրամբարների կառուցում, ճանապարհաշինություն, ռազմական օբյեկտներ, օդանավակայաններ, գերեզմանոցներ, գյուղատնտեսություն, իրրիզացիոն համակարգեր, գազատարներ և նավթատարներ, երկաթգծեր, արդյունաբերական շինարարություն, կրթահամալիրներ, սպորտային համալիրներ, աղբավայրեր և այլն: Այս համատեքստում կարևոր է առանձնացնել պատերազմական գործողությունները, որոնք նույնպես իրենց ուրույն ազդեցությունն ունեն ինչպես բնական, այնպես էլ քաղաքային լանդշաֆտների վրա:

Որոշիչ նշանակություն ունի ՀՀ-ում առկա լանջային գործընթացների բազմազանությունը, որը կարևոր նշանակություն ունի լանդշաֆտների դինամիկ փոփոխությունների համար<sup>4</sup>:

Նշենք, որ մարդու գործունեության արդյունքում Հայաստանի Հանրապետության լանդշաֆտներն էականորեն փոփոխվել են հիմնականում վերջին հարյուրամյակի ընթացքում(1925-2025 թթ.):

Հաշվի առնելով մարդածին և բնածին ազդեցությունների բազմազանությունը՝ անհրաժեշտ է լանդշաֆտների դասակարգման մեջ ձևավորել առանձին դաս՝ անվանելով **աղետի գոտու լանդշաֆտ**:

Ըստ առաջարկվող դասակարգման՝ բնածին աղետի գոտու լանդշաֆտներն են՝ ցունամիի, երկրաշարժի, հրաբխի, կարստային երևույթների, սողանքի (Նկ.1), սելավի, ձնահոսքի, քամու, մորեխների պարսի, կարկուտի, ջրհեղեղի, անտառային և տափաստանային հրդեհների, երաշտի, փլուզման (Նկ.2), քարաթափերի և այլ բնածին երևույթների աղետալի հետևանքների արդյունքում առաջացած նորագոյացությունները, որոնք արմատապես փոխում են բնական լանդշաֆտի ներդաշնակ տեսքը, որը ձևավորվել

---

<sup>4</sup> Բոյնագրյան Վ.Ռ., Գագինյան Ռ.Խ., Հողմնահարում և դրա հետևանքները, Երևան, 2012 թ., էջ37



է որոշակի ժամանակահատվածի ընթացքում տեղի ունեցած բազմաբնույթ բնական պրոցեսների փոխազդեցության արդյունքում:

Նկ. 1 Սողանքային մարմինը՝ որպես լանդշաֆտի տարր

Նկ. 2 Շենքի փլուզում Երևանում



Տեխնածին և բնածին աղետների



ազդեցությունը լանդշաֆտների վրա առանձին քննարկման առարկա է՝ հաշվի առնելով բազմաբնույթ աղետների առաջացման հաճախականության աճը վերջին տարիներին: Դիտարկվում է բնական լանդշաֆտների ակտիվ փոխակերպում՝ պայմանավորված բնածին և տեխնածին աղետներով: Բնակլիմայական փոփոխություններով պայմանավորված՝ փոխվել է լանդշաֆտների զարգացման դինամիկան:

Նկ.3 Սելավներ Սյունիքի մարզում

Որպես օրինակ՝ կարելի է դիտարկել վերջին տարիներին ակտիվացած հրաբուխները, երկրաշարժերը, ջրհեղեղները, սելավները (Նկ.3), ամենամյա անտառային հրդեհները (Նկ.4,5):



## Նկ.4

Նկ.4,5 Անտառային հրդեհներ  
Տավուշի մարզում



## Նկ.5

Առանձնահատուկ պետք է նշել ռազմաքաղաքական վտանգները, որոնք կապված են կիրառվող զենքի տեսակների հետ և, հետևաբար, կունենան բազմաբնույթ ազդեցություններ<sup>5</sup>:

Ներկայումս աշխարհում տեղի ունեցող պատերազմների արդյունքում ստեղծվել են նոր լանդշաֆտներ, որոնք պայմանավորված են ժամանակակից զենքերի կիրառմամբ:

Ավստրալիայում, ԱՄՆ-ում, Ռուսաստանի Դաշնությունում և այլուր տեխնաձին աղետների շարքում առավել ինտենսիվ փոփոխություններ է նկատվում հանքարդյունաբերության ոլորտում. տարեցտարի ավելանում են հանքերի տարածքները, որոնք ստեղծվում են բնական լանդշաֆտների՝ անտառների, մարգագետինների, արոտավայրերի և այլ ֆունկցիոնալ կարևոր նշանակություն ունեցող էկոհամակարգերի ոչնչացման արդյունքում:

Հայաստանում առկա է նաև 24 պոչամբար, որոնցից 13-ն ակտիվ են և բացասական ազդեցություն ունեն շրջակա միջավայրի վրա: 20-րդ դարից սկսած Հայաստանի Հանրապետությունում կառուցվել են 90-ից ավել ջրամբարներ, որոնք լանդշաֆտային բազմազանության մասն են կազմում: Կլիմայի գլոբալ փոփոխությունը, որը նկատվել է 20-

<sup>5</sup> Сарафян К.М., Методология оценки состояния трансформированных ландшафтов, с.5

րդ դարի կեսերից, անկասկած, զգալի ազդեցություն կունենա նաև ՀՀ բնաշխարհի, մարդկային գործունեության, հատկապես գյուղատնտեսության ոլորտի վրա, ինչը կբերի նոր լանդշաֆտային բացասական փոփոխություններ:

Գետնահողերը լանդշաֆտի հիմնական բաղադրիչներից են, որոնք ոչ միայն արտացոլում են բնական պայմանները, այլև ուղղակիորեն ազդում են լանդշաֆտի կառուցվածքի, կենսաբազմազանության և մարդու գործունեության վրա: Գետնահողերը գործում են որպես ջրի կլանման և պահման համակարգ: Դրանք ազդում են մակերևութային հոսքերի, գետերի և լճերի ձևավորման վրա՝ կանխելով կամ նպաստելով էրոզիային: Որպես հիմնատակ՝ գետնահողը չափազանց կարևոր նշանակություն ունի, նրա վրա ջրի ազդեցության խոր ուսումնասիրությունը որոշիչ նշանակություն ունի լանդշաֆտի զարգացման դինամիկ փուլերի վրա:

Ելնելով ուսումնասիրությունների արդյունքներից՝ կարելի է փաստել, որ լանդշաֆտային բազմազանությունը պայմանավորված է աղետների բազմազանությամբ և իրենից ներկայացնում է խախտվածության յուրահատուկ խումբ<sup>6</sup>:

Առաջարկվող նոր դասի մեջ կընդգրկվեն ենթադասեր՝ պայմանավորված վտանգներով, որոնք կդասակարգվեն ըստ ծագման բնույթի՝ բնածին աղետների, տեխնածին աղետների՝ ռազմաքաղաքական, սոցիալական, կենսաբանական փոփոխության ենթարկված լանդշաֆտներ: Այս դասերի մեջ կներառվեն նաև նոր լանդշաֆտային տիպեր՝ սելավային, անտառային հրդեհների, երկրաշարժային, հրաբխային, պիռոկլաստիկ գործընթացների, հրաբխային մոխրի, հրաբխային ռումբերի, հեյզերային երևույթների, երաշտով, ջրհեղեղային, ուժեղ քամիներով պայմանավորված լանդշաֆտ, արդյունաբերական պայթյունի, քիմիական արտանետումների, էներգետիկ համակարգերի, քաղաքային հրդեհի, շենքերի փլուզման, տրանսպորտային և այլ աղետների լանդշաֆտներ:

Ինչպես նշել է Վ. Ի. Վերնադսկին՝ մինչ օրս մարդը չափազանց հաճախ է հանդես եկել որպես «ավերիչ երկրաբանական գործոն», բայց ապագայում ցանկալի է, որ Հայաստանի

---

<sup>6</sup> Սարաֆյան Կ.Մ., Լանդշաֆտային բազմազանության դասակարգումը և աղետի գոտին որպես լանդշաֆտի յուրահատուկ ձև, Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ, 2025 թ., N 1 (26), էջ 127

ընդարձակ և հեշտությամբ մատչելի տարածքները հնարավորինս երկար ժամանակ անփոփոխ մնան՝ ծառայելով որպես թանգարան, հանգստի վայր բնության սիրահարների համար և գիտական հետազոտությունների օբյեկտ:

Գիտականորեն հիմնավորված երկրաբանական մոտեցումը միայն կարող է ապահովել լանդշաֆտային բազմազանության պահպանումը՝ հնարավորինս բացառելով մարդու բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:

Աղետի գոտու լանդշաֆտ հասկացության ներդրումը՝ որպես լանդշաֆտային դաս, կարող է օգնել դասակարգելու տարբեր աղետների պատճառով առաջացած լանդշաֆտների նոր տեսակներն այս դասում: Աղետի գոտու լանդշաֆտներն էկոլոգիական անվտանգության ցուցիչ են: Դասակարգման այս ձևը հնարավորություն կտա անօդաչու սարքերից նկարահանման միջոցով նույնականացնել լանդշաֆտներն ըստ տեսակների և օգտագործել այդ տվյալները տարածքների պահպանության միջոցառումների կազմակերպման ժամանակ՝ լանջերի հուսալիությունն ապահովելու համար: Այս տվյալները կարող են օգտագործվել նաև խոցելի համայնքների բացահայտման նպատակով, ինչը կնպաստի բարենպաստ միջավայրի ստեղծմանը՝ նվազեցնելով աղետների ռիսկի հաճախականությունը:

---

## РАЗНООБРАЗИЕ ЛАНДШАФТОВ, ВЫЗВАННЫХ СТИХИЙНЫМИ БЕДСТВИЯМИ, КАК НОВЫЙ ЛАНДШАФТНЫЙ КЛАСС

### САРАФЯН КАРАПЕТ

преподаватель кафедры естественных наук

Учебного подразделения спасательной службы и кризисного управления

Образовательного комплекса Министерства внутренних дел

Республики Армения

---

**Аннотация.** Разнообразие природных ландшафтов обусловлено воздействием и взаимодействием ряда природных и антропогенных факторов. Эти воздействия также могут быть вызваны стихийными бедствиями и техногенными катастрофами, на основе чего автор выделяет новый класс ландшафтов: ландшафт зоны бедствия. В зависимости от типов стихийных бедствий и техногенных катастроф предлагается разделить разнообразие классов на два подкласса: ландшафт зоны стихийного бедствия и ландшафт зоны техногенной катастрофы.

**Ключевые слова:** ландшафт зоны стихийных бедствий, класс ландшафтов, стихийное бедствие, техногенная катастрофа.

---

## LANDSCAPE DIVERSITY CAUSED BY DISASTERS AS A NEW CATEGORY OF LANDSCAPES

### SARAFYAN KARAPET

Lecturer at the Chair of Natural Sciences,  
Rescue Service and Crisis Management Educational Unit,  
Educational Complex of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia

---

**Abstract.** Natural landscapes diversity is determined by the influence and the interaction of various natural and anthropogenic factors. These influences may also result from natural and man-made disasters, leading to the emergence of a new category of landscapes, which can be termed as “disaster-zone landscapes”. The diversity within this category is associated with different types of disasters and can be subdivided into two subcategories: landscapes of natural disaster zones and landscapes of man-made disaster zones.

**Key words:** landscape of natural disaster zone, landscape category, natural disaster, man-made disaste

#### Գրականություն

1. Կ.Մ.Սարաֆյան, Լանդշաֆտային բազմազանության դասակարգումը և աղետի գոտին որպես լանդշաֆտի յուրահատուկ ձև, Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ, 2025թ., N 1 (26), 122-128 էջ
2. Ս.Զ.Թամոյան. Շրջակա միջավայրի պահպանություն և ազրոէկոլոգիա, Երևան, ՀԱԱՀ, 2018թ. էջ. 15
3. Բոյնագրյան Վ.Ռ. Գագինյան Ռ.Խ. Հողմնահարում և դրա հետևանքները, Երևան, հեղինակային հրատարակություն, 2012թ., էջ.37
4. Լանդշաֆտի Եվրոպական կոնվենցիա 2004թ.
5. В.Р.Бойнагрян, Склоны и склоновые процессы Армянского нагорья, Ереван, 2007г., изд. ЕрГУ, стр. 27
6. К.М.Сарафян, Методология оценки состояния трансформированных ландшафтов, 118- 122 стр.
7. К.М. Сарафян, Геопарки одна из форм сохранения и рационального использования природы Армении, Известия НАН РА, Науки о Земле, 2008, ԵՄ1, №3, 46 48

Հոդվածը գրախոսվել է 05.02.2026  
Ներկայացվել է տպագրության 09.02.2026